Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

Am. g. 34

d Co. Ltd.
r Wharf,
Essex.

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ի ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՈՒՆՍ

ԵՒ ՎԱՐՔ

Ս. ԻՇԽԱՆԱՑՆ ՍԱՀԱԿԱՑ

ԵՒ

ՀԱՄԱՋԱՍՊԱՅ

ՀՏԼ
110

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՌՅԳ

Arm. 9. 34

Digitized by Google

Digitized by Google

ՍՈՓԵՐՔ

ՀԱՑԿԱԿԱՆՔ

ԺԲ.

Digitized by Google

Digitized by Google

ՍԻՍԻԱՆՈՍԻ

ՀԱՑՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՆԵՐԲՈՂԵԱՆ

Ի ՍՈՒՐԲ ՔԱՌԱՍՈՒՆՍՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՃԳ—1854

Digitized by Google

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՍԻՄԻԱՆՈՍԻ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԽՕՍՔ ԱՍՏԱՑԵԱԼ ՑԱՄԵՆԱԺՈՂՈՎ

ՏՕՆԻ ՍՐԲՈՅ ՔԱՌԱՍՆԻՑՆ

Ի ԽՆԴՐՈՅ ԺՈՂՈՎՈՅՆ

Ի ՆՄԻՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵԲԱՍՏԻԱՅԻ

ՑԵԿԵՂԵՑԻՈՋ ՍՐԲՈՅ ՔԱՌԱՍՆԻՑՆ

ԵՒ Ի ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՍՐԲՈՅ

ՔԱՌԱՍՆԻՑԴԱՅ ԺՈՂՈՎՈՅՆ

BODLEIAN
15 SEP 1970
LIBRARY

Digitized by Google

Զտեսն գթութիւնն Աստուծոյ և զմարդասիրութիւնն ածել միշտ զմտաւս հրաման ընկալաք յաստուածաշունչ գրոց, և զգոհացողականն հաստատեալ օրհնութիւնս։ Եւ յաւէտ պարտական գտանել առ սէր արարչական խնամոցն յամենայնի բարերարութեամբ գոհացող լինել զԱստուծոյ և զՀօրէ, և երբէք ոչ մոռանալ. յայժմուս զապագայիցն տեսութիւնս 'ի միտ առնուլ քրիստոսական հանձարով, և որ լիներ-լոցն է մեզ պայծառութիւն նորոգական կենացն. զոր ծածկեալ Քրիստոսիս առ Աստուած իմանամք հաւատովք. և նայեցողութիւն մեր հոգւոյ ակամբ յայտնիկ կացցէ վերամբարձեալ. զի յորժամ յայտնեսցի յուսալին մեր կեանքն Քրիստոս, յայնժամ և մեք ընդ

ծր.

Digitized by Google

նման երեւեցուք երկնաւոր փառ-
ուք, նորին պարգեւեալ մեզ զայ-
սոսիկ՝ 'ի մեզ զնորայն տեսանել
զփառս։ Եւ այսոքիկ ասացեալք
ոչ երկբայելի և ոչ յերկուանալի
այլ ստուգութեամբ և հաւատով
քանզի նման նման եմք լինելոց
վասն զի տեսանելոց եմք զնա որ
պէս և էն, ըստ Յովհաննու առա-
քելոյն խրատու։

Բայց այժմ, եղբարք, զմարմնոյ
նորա զառաջին գալստեանն զսի
և զողորմութիւն և զփրկութիւն
զշնորհն՝ որ 'ի մեզ պարգեւեցաւ
հաստատուն հաւատով 'ի հոգի
մեր ընկալեալ, արժանապէս զգ-
հացողականն փառաւորութիւն
փութացուք վերառաքել, համ-
կրօն խոստովանութեամբ զպատու-
շաթանց մերոց պատարագ օրհնու-
թեան յամենայն աւուրս յամենայ-
ժամ յարատեւակ հանգիստիւք, հ-
նապազորդ օրհնութեամբ, մաքրա-
զարդ և արդարախոհ Ճանապարհ
հորդութեամբ 'ի մարմնական կեն-
ցաղս. օրինակ մեզ ունելով զհ-

Digitized by Google

Հոյացեալն Աստուծոյ զսրբազան նահատակն, զառաքինի վարուք ճգնեալն և զյաղթող վկայն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որք հեռեւեցան խաչելոյն վասն մեր, բազում և պէսպէս չարչարանօք և տանջանօք կատարեալք հասին 'ի Քրիստոս յոյսն իւրոց հաւատացեալց, և եղեն բարեխօս ամենայն աշխարհի։ Հոսա կենաց եղեալ սիրելոց յաստուածգիտութիւն լուսաւորեցին, զՃենՃերազոհ 1 մահաշունչ կռապաշտութեան՝ հոգւոյն հողմով հալածեցին։ Եւ արդ նոցին բարեխօսութեամբ պահպանեալք յԱստուծոյ հասեալ ժամանեցաք 'ի հրաշալի և 'ի մեծապայծառ վայելուչ և գեղեցիկ, ցանկալի և փափագելի տօնս փառաւորեալ և մեծանուն վկայիցն Քրիստոսի սրբոց Քառասնիցն։ Զայսոսիկ տարւոյ կատարելով զտօնախմբութիւնս 'ի սոցայս հռչակելի և բազմահամբաւ սիրելիս գրագոչ և յոքնեսանեան 2 սրբազան և մեծապատիւ տօնս հասանել արժանաւորեցաք։

Վասն որոյ 'ի սկիզբն բանից մեր-
րոց և գովեսաի սրբոցն, փառաք ա-
մենատեսաւն կենարարին մերոյ և
գոհութիւն 'ի սոցայս յիշատակի.
որ զմեր նուաստութիւնս արժանա-
ւորեաց յայսպիսի հասանել հան-
գիսի սրբոցն լուսաւոր օր վկայու-
թեան 3, և ընդ հրեշտակս պարել
հոգեւոր երգովք, աստուածեան
լուսով արփիաւորեալ, մոգք արթ-
նացեալ, զհոգւոց մերոց մաքրել
զտեսարանս: Առողջ և յատակ հայ-
եցուածովք զսոցայս տեսցուք զնա-
հատակութիւնս. որպէս անդէն
իսկ աչքք առ նոսա լինելով յաս-
պարիսի առաջի դատաւորին և լսել
զհարցումն և զպատասխանին մին-
չեւ 'ի վախճան ճգանցն պատերազ-
մին և յաղթութեանն: Ամենայնի
տեսող լինիցիք հոգեւոր աչքք, և
մարտակից նոցունց չարչարանացն
վշտակցութեամբ. միաբանութեամբ
հաւատոյն ընդ նոսին գտանել
և աշխատել տարժանմամբ վաս-
տակոցն, որպէս զի և վարձուցն
հանդիպել յօրն Քրիստոսի:

Digitized by Google

Եւ արդ իմ զհարկ խնդրոյ ձեր ընկալեալ և զանարգամեծարու-թիւնդ 'ի վերս քան զարժանն իմ, խօսել 'ի ածի մեծափառ արքոյ քա-ռասանիցն, ոչ զիս արժանի վարկա-նելով նոցա արժանաւորս ինչ ա-սել բան, այլ վասն արժանաւորու-թեան խնդրողացդ և հնազանդու-թեան պատուիրանին յառաջ բե-րից զիմս տկարութեան խօսս լե-զուի: Զնոյն զձեր ազօթագ օգնա-կան ունելով իմումս անզօրութեան, և զնոսին վկայն պատուական բա-բեխօս առ Աստուած տուիչն պար-գևաց բանից բանաւորացս. զի և ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ իմոյ, խօսել զօգուտն հոգւոց 'ի յիշատակի փառաց արքոյն: Եւ այ-ստուհետեւ յիշմամբ անուանց նոցա ըստ իւրաքանչիւր անուան գրոյ ա-ռեալ ասացից, յառաջնումն սկսեալ մինչեւ ցվերջինն անուանց քառաս-նից արքոյն: Եւ դուք ունկնդրու-թեամբ լուարուք հոգւով հեզու-թեան, հաւատով ընկալեալ ըզ-ասելիսն բանից 'ի Քրիստոս:

Digitized by Google

Դառնութեամբ մաղձի չարեաք առլցեալ դժնդակն 'ի Թագաւորս Լէկիանէս, հակառակն եկեղեցւոյ Քրիստոսի և քրիստոնէից հալածանս յարուցանէր, խաղայր, խընդայր չարեացն խորհրդածուն, նորագոյն տանջանարանս գտանէր, տայր հրաման գատաւորաց ընթանալ ընդ աշխարհս իւրոյ տէրութեանն, զքրիստոնեայսն տանջել չարաչար հարուածովք։ Ո՛վ մոլորութեանն. հրապուրեալն 'ի դիւաց հաստատութիւն հզօր զայս համարէր իւրոյ թագաւորութեանն. ցանկայր արեամբ սրբոցն զերկիրն ընուլ. կատարեալ 4 չարեացն գտակ լինէր, և անուն առնոյր դից բարեպաշտ 5 լինել. զարդարէր զկուռս, զօրանայր չարեաք, խրոխտայր, գոռայր, գոչէր, ընդդէմ Քրիստոսի հակառակ խորհէր աւերմամբ եկեղեցւոյ։ Մեծամեծացն տայր պատուէր. Մի դադարէք սպանանել զքրիստոնեայսն զորս գտանէք. սիրելի իմ նա է, որ զհրամանս իմ կատարէ, և զհակառակս ատուա-

ծոցն մերոց խապտաւ կոտորէ. իսկ որ ընդդէմ հրամանաց մերոց լինի-ցի, բազում տանջանօք չարչարեսցի և կորիցէ։

Եկն ի հաս այնպիսի հրաման հրովարտակաց յամենայն գաւառս և 'ի քաղաքս. ծաւալեցաւ, տարածեցաւ, փութով հասաւ յամենայն տեղիս առ գատաւորս և իշխանս, և շինեցաւ պատերազմ մոլեկան 6 թագաւորին կոտորել զնոսա զոլորտն անխնայաբար։ Տեառնէք, եղբարք, զաղէտիցս տարտակուսանս առ քրիստոնեայս և զքրիստոսի ներողութիւնն։ Ընդ ուրեմն տանջանացն բազմանայր. և սէր նահատակացն բորբոքէր առ քրիստոս. խոցումն և խոշտանգումն արքացն խստանայր, և խաչին խորհուրդ հաւատով պայծառանայր։ Դիւաբնակն Լիկինէս ցնծայր 'ի կռոցն պաշտօն, և դեռք սարսէին 'ի նահատակացն հալածեալք։ Ի յայսմ ժամանակի քառասուն վըկայքս միահաւատ, քրիստոսակրօն, միագունդ զօրականք 'ի կապադովկիացւոց գաւառէն Գամրոց 'ի

միասին գասեալք, միաբան սիրով ընդ միմեանս յարմարեալք. բանիւք և գործովք 'ի Քրիստոս հաւատոցն միախորհք։ Արդ սոքա ըմբռնեալ լինէին 'ի նմին ժամանակի վասն Քրիստոսի հաւատոցն և խոստովանութեան յանծրէն դատաւորէն Սեբաստիոյ քաղաքին, որ զքննութիւն այնմ կողմանն հաւատացեալ ունէր։ Ժամ գտեալ յատենի կացուցանել զՃշմարիտն Ղ զայնոսիկ՝ հարց և փորձ առնէր վասն հաւատոց նոցա. բռնադատէր ապա զնոսա հաւանել և զոհել աստուածոցն։

Նոքա այնուհետեւ խոստովանէին զՔրիստոս միայն Ճշմարիտ Աստուած. համարձակութեամբ ասէին պատասխանի, ոչ զանգիտէին 'ի ցասմանէ, ոչ ցանկանային պատուոյ. արհամարհեալ լինէր մեծութիւն. տանջանք ոչ զարհուրեցուցին. խօսք ոգեքանաց ոչ պատրեցին, գառնութիւն դիմաց գատաւորին ոչ երկեցոյց. յոյս նոցա հաստատուն էր որպէս լեառն Սիոնի անսասանելի։ Ո՛վ պայծառ

Digitized by Google

տեսութեան արդարոց անձանց միաձայնութեան. քառասուն թըւով լեալ անձինք 8, 'ի մի բերան տային պատասխանի. Քրիստոնեայք եմք, Քրիստոսի ծառայք։ Բարբառ ամենեցուն մի լեալ, վասն զի յոյսն ամենեցուն մի միայն Քրիստոս. ըստ նմին և բարբառ նոցա միաբան եւլանէր. քաջալերէին զմիմեանս անշարժ կալ յիւրեանցն փրկիչ դաւանութեամբ։ Սիրելի է ինձ յայսմ վայրի հանդիսանալ անյապաւաբար զնոցայն յեղյեղուլ ըզբանիցն ասացուածս. իմաստասիրաբար 9 զնոցա սէրն որ առ Քրիստոս՝ տեսանել. 'ի մի միաբանութիւն հաւատոց գործովք յանդիման կացեալ Քրիստոսի, բիւրապատիկ բարութեանց եղեն մեզ առիթք, մաքրեալք զհոգւոց մերոց մթացուցիչ խորհուրդս համակամ իւրեանց ազօթիւք։

Կատեցին ապա զսուրսն և արկին 'ի բանդ թերեւս ահացուցեն 10 զնոսա, այլ նոքա անդրդուեալ յոյսով յօգնականութիւն զԱ-

տուած կարդային, աղօթս ձիգս և յերկարս մատուցանելով. զի ասցէ նոցա յաղթել 11 չարին խորհրդոց, և ցանկային մեռանել վասն հաւատոցն Քրիստոսի խոստովանութեամբ՝ յաւտոյն կենաց ակն ունելով։ Իբր նոքա յայն մաղթանս յորդորագոյնք էին հառաջմամբ սրտից, երեւեալ նոցա փրկիչն քաջալերեաց հաստատուն կալ։ Որոց ասեսեալ զտէր միաբան սիրով յօժարագոյնք ըղձանային վկայական առնուլ անուն և թողուլ յիշատակ քաջութեան. բերկրալի ձայնիւ սաղմոսէին, երգ հոգեւոր հօր 'ի բարձունս առաքելով։ Իսկ զատեալ անձանց զօրութեանց զտէրունական երեւումն, եւս առաւել հաստատագոյն յուսով յայտնապէս խոսէին զիւրեանց քաջութիւնն 'ի մարտս պատերազմի առաջի մարմնաւոր և մահկանացու թագաւորաց առանց բաժանման մնալ և յայնմ հանգիստ։ Բաբունաբար յառաջ բերեալ զբանս վարդապետէին միմեանց. որպէս յայնս, առեն, յաղ-

Digitized by Google

թեցաք և երեւելի գառաք, սապէս և յայսմ յաղթեսցուք և առցուք գովութիւնս յանմահ թագաւորէն մերմէ. շահեսցուք ապա և զաղթայ-ութիւնն, միաբան մարտիցուք և ըստ օրինի, զի պսակեսցուք։

Իբրեւ անցանէին աւուրք ինչ 'ի վերայ, միւսանգամ առեան զնէր գառաւորն. յաւելոյր և ժողովատ-տողացն. քանզի անդ հասանէր և դուքն։ Սուրբքն ածան առաջի անտրտում և զուարթ երեսաք իբր 'ի մեծ ուրախութիւն. խորհուրդք նոցա լի ազօթիւք և արտիւք յերկինս։ Ղամբար վառեալ զհաւատացն Ճը-ղրադ 'ի ձեռս 12 իւրեանց ունելով, զի լոյս տայցեն տեսողացն հոգւով զնոցա Ճգանցն տեսակ։ Այսու գլխովք կացեալ յառնին, 'ի հարցա-նելն զնոսա զնոյն ասային պատաս-խանի զոր յառաջնում նուագին, զՔրիստոս խոստովանել և ոչ ուրա-նալ զնա քնաւ։ Ուստի և յանգի-մանեցին ատտուածիմաստ քանիւք զանոսի նոցա ոգաշատմունս գեւս անուանելով և կուռս, և զնոսին գի-

Digitized by Google

սապաշտաս և մոլորեալս, նաեւ խոս-
սարեալս, և առանց լուսոյ, մառախ-
լապատաս և միգազգեաց, անաստ-
ուածս և մոլեգնեալս, և բնաւ իսկ
անիմաստ մոլորութեամբ բարգաս-
ջեալս։ Սրբոցն զայս ինչ համարձակ
խօսեցեալ, սատա սպառնալեացն
շարժեցաւ, այնուհետեւ հրամայե-
ցաւ սպասաւոր զօրացն ամպարշտ-
ուց հարկանել քարիւ զբերանս
նոցա և խորտակել։ Իբրեւ սկսան
քարաձիգ լինել 'ի վկայսն, զմի-
մեանս քարկոծէին։ Ո՛վ զարմանա-
լեացն. զնոսա կարծելով 13 խորտ-
ակել՝ ինքեանք ընդունէին զհա-
րուածսն։ Այսպէս հրաշագործ-
եալ Աստուծոյ, զի անդէն 'ի ծոցս
իւրեանց ընկալցին զհատուցումն
եւ զմն չարեացն եւ զմնպատիկ։ Ո-
րով զչարեալ և գուքսն ցասմամբ,
առեալ վէմ կամեցեալ հարկանել
զաւրդսն, յերեսս գատաւորին գի-
պէր և Ջարդէր զանամոթեալն լը-
բութեամբ 'ի պաշտօն գիւացն։
Հիւթիւ հոգւոյն այսոքիկ գործ-
իւք, զի յամօթ լեցին որ չարիս

Digitized by Google

նիւթէին օթեւանացն հոգւոյն սրբ-
բոյ. որպէս հուրն Բաբելոնի երկից
մանկանցն ցօզաւդին լինէր. իսկ ըզ-
քաղդէացիսն այրէր և բորբոքէր,
այսպէս և այժմ գործեցաւ։ Յորս
ձգէին քարինս՝ նոքա անվնասք, և
քարաձիգքն 14 քարաւէժ լեալ.
իսկ գունդն սրբազան լի խնդութ-
թեամբ և զուարճութեամբ։ Վերս
առաքէին այնուհետեւ զգնհուա-
թիւն և ասէին. թշնամիք մեր ակա-
ռացան և անկան, այլ մեք յարեաք
և ուղղութեամբ ապրեցաք։ Արդա-
ւրեւ կատարեցաւ երգն Դաւթի.
Սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա
և աղեղունք նոցա փշրեցան։ Այլ
սրբոց աղօթքն վերամբարձեալ լա-
ստով 'ի յերկնուստ առաքեալ լի-
նէին, և ճնացին հաստատուն 'ի հա-
ւատս։

Արդ իբրեւ այս այսպէս լինէր,
գտրձեալ արկին զնոսա 'ի բանդ, 'ի
բանդին մտրմնով արդելեալք և
հաւատքն անարգել և անխափան
լինէր 'ի հոգւոջ նոցունց. քանզի
առաւել եւս խնդութեամբ ապր-

Digitized by Google

թէին և անվեհեր զմիմեանս արիաբար քաջալերէին։ Ղուզեալ զնարհուրդս մոտաց իւրեանց անխոնարհելի, 'ի վերս ամբարձեալ յերկինս առ Աստուած հայեցողութեամբ։ 15 Ջոյն կենաց փափագելով Յանային Ջերմեռանդն սիրով ընդ Քրիստոսի լինել. և թեթեւ թուէր յաչս նոցա առժամանակեայ նեղութիւն մարմնոյ տանջանաց։ Եւ իբրեւ նոքա զայն ցանկային և խնդրէին, դարձեալ յայտնապէս երեւէր նոցա տէր Յիսուս և ասէր. Ամենայն որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ. քաջալերեցարուք, և մի երկնչիք, ես ընդ ձեզ եմ. չարչարանքդ առժամանակեայ են, այլ հաստուցումն վարձուցն զոր ես տայց՝ յաւիտենական։ Սակաւ մի, ասէ, համբերեցէք և ընկալջիք զանթառամ փառաց պսակն. բազմանկանք պատրաստեալ են ձեզ 'ի տան Հօր իմոյ 'ի սկզբանէ աւուրց աշխարհի. 'ի յերկրի նահատակիք և 'ի յերկինս պատկիցիք. մեծամեծս ընդ փոքուս վարձատրեցից ձեզ, ով սիրելիք իմ։

Digitized by Google

Եւ ապա երջանիկն գաս ծանու-
ցեալ զհաւատոցն պայման, շնոր-
հալից ցնծութեամբ զաւետեացն ա-
ռեալ հրաւէր 'ի տէր աւետեացն
տային զյոյսն։ Երկին զբանդն էր
տեսանել. հրեշտակս մարմնաւորս
զարգելեալ սուրբս 'ի բանդին.
փառք 'ի բարձունս էր բարբառ հա-
սարակաց բանաւոր ուսրբ գնդին։
Իսեալ ընդ միմեանս հոգէզարդ
միութեամբ հոգւովքեռաց 16 հա-
ւատոցն հետեւմամբ, անխախտաս
մնալ հայցէին յԱստուծոյ յոր կո-
չեցանն կոչումն վկայական հանդի-
սին. եռահրաշ զինու վառեալ յու-
սով սիրով և հաւատով, կենաց և մա-
հու կենարարին ընծայեալ բոլո-
րապտուղ պատարագ։ Ցեսցուք աս-
տանօր զաստուածազան խոստովա-
նութիւնն արդարախոհ մտաց և նման
ենեսցուք այսպիսեաց վարդապե-
տացս. տացուք և մեք զկեանս մեր
Աստուծոյ. գոհասցուք և յետ մա-
հու. մի տրտմեալ յուսահատես-
ցուք՝ որովք առաք օրինակ զկատա-
րելոցն։ Պայծառապէս 'ի մեծ ա-

տենին հրապարակատեսս տանջանան
իմացեալ 'ի միտ առցուք ընդ հա-
ւատոցն և գործս ցուցանել որպէս
զնոսա, զորս երանեմք այսօր և բա-
րեբանեմք նոքօք զՔրիստոս Ա-
տուած մեր: Եւ ածեմք յաղերս
զնոցա ճգնութիւնն, խնդրելով
զհաշտութիւն բնաւ աշխարհի, ո-
րով ուսցուք զմիաւորութիւն հա-
ւատոց, գործոց և վարձուց 17 հա-
տուցման:

Հետեւեսցուք դարձեալ անդրէն
ընթացուք յոճ կարգի պատմու-
թեանն: Եւ ապա երրորդ անգամ
կացեալ յատենի վկայքն Քրիստո-
սի, ոչ ինչ լսելոյ արժանի առնէին
զբանս բռնաւորին, այլ միայն զիւ-
րեանցն ճշմարտութիւն միշտ նոյ-
նապէս խոստովանէին. Զ Քրիստոս
ոչ ուրանամք, ասէին. որ ինչ ձերդ
է կամք և հրամայեալն ձեզ 'ի թա-
գաւորէն, կատարեցէք վաղվաղա-
կի. քանզի ոչ ինչ կարէ մեկնել
զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի, ոչ սպառ-
նալիք ձեր և ոչ պատիւ, ոչ տան-
ջանք և ոչ չարչարանք, ոչ հուր և

ոչ սուր, ոչ կեանքս անցաւոր և ոչ մահ, քանզի յարութեան հաւատամք։ Դուք զմեզ ոչ կարէք յաղթահարել, զի խորհրդակից ձեր սատանայ է և զօրացուցիչ մեր Քրիստոս։ Իսկ դատաւորն յամօթ լեալ, միանգամայն և մրմռեալ գազանաբար՝ խորհուրդ 'ի մէջ առեալ մեծաջան լինէր։ Քննէր զսանջանաբանս, բազմահնար մեքենայս կազմել փոյթ 'ի մէջ առնոյր, զբարձակիցսն հարցանէր. Որոնք սպանմամբ էարամեռ արասցուք զայսպիսի անդարձ դատապարտելոց անձինս։ Ո՛վ անմտութեանն, մանաւանդ ո՛վ էարին մոլորութեանն. արբեալ էին մինար մոլորութեամբ, շռայլեալ էին աւելատատացութեամբն, 'ի կռամոլորութիւն 18 ջար հոգւով էին առլցեալ. գիւաց խորհրդածէին. որովք կորուսանէին զիւրեանց անձանցն զգիւտ. խաւարեալք կուրութեամբ մտաց շօշափէին զատանայ։ Սիրաք իւրեանց լի ջարեացն դանձիւք, հանէին զարդիւնացեալն 'ի խորուրդ պտուղ ջարութեան։

Նկատէր ապա յետ բազում անօ-
թոց տանջանացն և գտանէր զդրժն-
դակն 'ի մահարարս։ Գիշեր մի ապարշ
և ցուրտ դառնաշունչ օդով սասա-
կատատոյց, որ յոլովագոյն 19 և նոր
եհաս այնմ աւուր. 'ի նմին աւուր
ընդ երեկս 'ի մուտս գիշերոյն կա-
պեալ զամենեսեան 'ի միասին մերկս
զսուրբսն, արկանէր 'ի լիճ մի ծո-
վու մերձ 'ի քաղաքն։ Ասասանօր
ճմլի սիրտ իմ և աչք իմ լի արտա-
սուօք լինի, նա և լեզուս տկարանայ
առ 'ի պատմել զայնպիսի աղէտս
տանջանաց սրբոցն Աստուծոյ. սոա-
կամ ամենայն անգամաքս և այլայլի
միտք իմ յասել զգառն չարչարա-
նաց լանան։ Արեգակն զսուրբն-
ջեան ընթացքն կատարէր. գիշերն
խաւարտարեր և օրակուլ սիրտ
ծածկէր զաշխարհս. սասականայր
գառնութիւն օդոյն առ հասարակ
'ի միասին ժողովէր գժնիկն։ Խակ
պարէր այնուհետեւ ջուրքն. սառ-
նամանիքն շուրջ պատեալ զերանե-
լեօքն մածնոյր ընդ մարմինսն, պան-
գէր պարպատէր ճարճատու� 20

ոսկերացն առնէր, արիւնն հոսէր
վասակաբար իբրեւ զյորդահոս աղ-
բերբ. Ներկէր ապա ջուրքն զանան-
վերն գոյն 21 կարմիր, հիւսիսային
ցողմն հնչէր եղեմնարկու 22 և
փոթորաբերբ 23. Հեղոյր 'ի վերայ
երկիր մարմնոցն։ Պատառէին մար-
մինքն, ոչ էր արտաքուստ, և ներ-
սուստ թիւնն նուազէր 'ի ներքուստ,
անառանելի էր ամենայն իրօք, ողոր-
մելի էր և տեսութիւնն, սարսափելի
էր և տանջանք։ Քաջ նահատակքն
զմիմեանս յորդորէին, ձայն զուարթ
իւրերաց ձայնէին. Զինդ կացցուք,
եղբարք, մի վհատեսցուք, մի երկի-
ցուք, մի զխորհուրդս խոտորեսց-
ցուք, միաբան մարտիցուք. մի դատ-
նուութիւն տանջանացս զարհուրե-
ցուսցէ, մի 'ոչ ոչ էլ մարմնոց մեղկա-
ցուսցէ զհոգիս մեր, 'ի յոգնութիւն
Աստուած կարդասցուք, ոչ թող-
զու զմեզ. փոխանակեսցուք զա-
միւնս ընդ արեանն Քրիստոսի. տա-
ցուք զմեզ փոխարէնս մահու նորա.
զոր կիրքի մարմնոյս մեր պատա-
ճառ՝ հրով հոգւոյն վառեալ. սէրն

մեր առ Քրիստոս Յիսուս միանացի, որոնք հանցի մարմինքս, հոգցի արիւնս. միայն հաւատն մեր կացցէ անշարժելի յուսոյն։ Որպէս էաքն միաբան 'ի կեանս, և 'ի մեռանելս մի որոշեացուք 24. կացցուք միաբան 'ի սանջանս, զի զպատկն առցուք. մի յաղթեացէ սատանայ քառանիցս՝ որ մարանչի ընդ մեզ իւրովք խորհրդակցաքք. այլ մեք յաղթեացուք նմա և փախստականն արարացուք առմօթալի։ Արքոցն այս էր խրատս առ միմեանս և ալօթք առ Աստուած, և տանջանքն այն տագնապելի և տարակուսանք, և ցաւք անլամբերելի. այլ նոքա անսասանելիք և անխռովելիք 25 մնային։ Ամենայն ուր առեք տագնապ, հոգմն դառնաշունչ և ջուրքն սառամանիք 26. և նոքա 'ի մերկութեան։ Իսկ արքոցն ոչ անարտախզելի 27 առ յուսալին իւրեանց։

Եւ իբրեւ այնպիսի ցրտութիւն առաջին պահ գիշերոյն խստութեամբ զօրանայր, մին 'ի նոցանէ որում անուն կոչեցին 28 թշուա-

ուսկան և տապաշնորհ, արտասքս եղա-
նէր 'ի տուրբ գնդէն, սա չծուծել
ներզուլթեան տառամանեաց անկա-
նէր 'ի բաղանիան զոր չարահնարքն
էին պատրաստեալ վասն այնպիսի
պատրանաց. և աւաժամայն լու-
ծեալ հալեցաւ մահուամբ: Վիրա-
ւորեցաւ մարմնով և չարդարա-
ցաւ հոգւով. կորեաւ մարմնով
և ոչ գտաւ հոգւով. չարչարեցաւ
և ոչ պատուեցաւ 29: Այսպիսի
է անծուծիցն հանդէս. այսպէս և
ծուլիցն վիճակ. աւանդ բախտին.
արտասուելի է և տրտոյս կորուստ,
և վշտակցելի յողբս և յաշխատ 30:
Ամա բաւական է պարտաւանաց
բան իւր կորուստն. այլ 'ի մէնջ
արտասուք և տապաշտաւ և ոչ ծաղր
զգլորմամբն: Ո՛վ վշտացս, ո՞վ անտա-
ներելի տապոյս. անդ գոլ մտաքս զիս
տեսանեմ և զվախճան եղիցն նկա-
տեմ, և նայիմ զտրտամուլթիւն լու-
սազարդ արքազանիցն ոգորմելի զինի
հայեցեալք և ասեմ 'ի միտս դար-
ձեալ արտասուալից աչքք յանակնց
լեալ վշտաք վարատեալ ոչխարին, ոչ

Digitized by Google

բային լայնահառաջ բառաչմամբ 31.
ոչ այնքան ցաւագին էր սառամա-
նեացն խստութիւն, որչափ պակաս-
սումն եղբօրն 'ի թուոյն: Ի վերջ
յերկինս զաչս համբարձեալ ար-
տասուահոս պաղատանօք ձայն աշ-
խարհանաց առ բարձրեալն 'ի բարձ-
ունս առաքէին ալեբաալի մեղմա-
նօք. զտարածումն ձեռաց առ
Քրիստոս վերաբերեալ զօգնութիւն
խնդրէին՝ մի քայքայել 'ի միմեանց,
և մի պակասել խորհրդական իւ-
րեանց 'ի թուոյն, այլ մնալ քառա-
սուն. ընդ Քրիստոսի լինել և պատ-
կել հաւատոյ միութեամբ: Կեցո
տէր, ասէին, զծառայքս քո. և մի
'ի գեհոս բարկացիս մեզ, և մի արար-
մատութիւն քո 'ի վերայ ծովու. մի
կորուսաներ զմեզ և մի թողուր,
տէր, յիշեա զխոստումն քո և նայեա
'ի տառապանս մեր. ողորմութիւն
քո հովանի մեզ եղիցի, և տանջա-
նարանս մեր օրհնեացէ զքեզ: Ա-
պրեցո զմեզ, տէր, զի կարդացցուք
զանուն քո զոր օրհնեն ամենայն ա-
րարածք երկուքեանքք և աներկուքեանքք:

Digitized by Google

Սիրեցաք զքեզ, տէր, 'ի բոլոր սրտէ, և զանձինս մեր ընծայեցաք քեզ պատարագ, որ օրհնեալդ ես 'ի քո ստեղծուածոց, և քո հրամանաւ ամենայն ինչ կարգեալ կայ 32, և քեզ հնազանդին բնաւ գործք քո։ Եւ այսպէս 33 բնաւ օրհնութեամբ ընդ բոլոր գործս Աստուծոյ անցանէին յիշմամբ խորոց անդնդոց և հողմոց, կարկտի, ձեան և սառին և ցրտոյ և մրրկի որք առնեն զբան նորա և կատարեն զհրամանս նորա։

Եւ զառաջին նախահարցն յիշէին զաքանչելիսն զգործսն լուսափայլ խնամոցն որ առ նոսա կատարեցաւ. օգնականութիւնն Աստուծոյ որ առ Յակովբն փրկեալ յԵսաւայ, և զՅովսէփ ապրեցուցեալ ընդ նմա վաճառելով, և զՄովսէսին լսել սրտապագուչ աղօթից, և առնել նշանս և արուեստս և տալ շնորհս, մինչ զի ծովահեղձիկ 34 առնել զփարաւոնն։ Ի նոյնպէս՝ որ զայս հրաշագործեցեր, յուսացաք. ապրեցո զմեզ, զի մի ընկղմեսցէ զմեզ պատոյտս ջուրց.

Digitized by Google

օգնեա մեզ, Աստուած փրկիչ մեր, զի աղքատացաք յոյժ։ Վասն փառաց անուան քո նայեա 'ի մեզ, զի շուրջ պատեցին զմեզ ստուերք մահու. թեթեւացո, տէր, զծանրութիւն օգոյս։ Առ քեզ, տէր, կարդացաք. լուր մեզ, զի ծանիցեն ամենայն ազգք երկրի զփրկութիւն Աստուծոյդ մերոյ, և տացուք մեք փառս անուանդ քո, զի 'ի քեզ ապաւինեցաք, տէր Աստուած մեր, կեցո զանձինս մեր։ Ողբա զայս ասելով 'ի մէջ այնպիսի վտանգիցն՝ ահա յանկարծակի զարմանք աքսանէլի և տեսիլ սոսկալի. 'ի նմին ժամու գիշերոյն ծագեաց շուրջ զնոքօք արեւ, ծագեաց և ծաւալեցաւ. ցրտութիւնն գառնայր 35 'ի ջերմութիւն, և ձմեռն յամառն վազվազակի փոխիւր. հալեցաւ լուծաւ ալաղն, և եղեւ ջուրն ջուր բարիոք և ջերմ։ Ոչ այնուհետեւ տագնապ և ոչ սառնախառն օդ, ոչ հողմ դըժընդակագոյն և ոչ սիք գժուարադէպ, այլ ամառն. ոչ արեգակնատագ՝ այլ քրիստոսեան էջք և լոյս

Digitized by Google

գերագոյն։ Սերովբէից թագաւորն ինքեաւ 'ի վերուստ տեսանիւր սրբոցն. զաչս 'ի վեր համբարձեալ ձեռամբ մատնացոյց լինէին, յորդորեալք մի զմի 'ի վեր հայէին. Փրկիչն տէր Յիսուս ահա ծագեաց առ մեզ, տեսցուք և զուարճացուք, ցնծացուք և բերկրեսցուք. ահա ոչ եւս 'ի ձեռաց եթող զմեզ, այլ եհաս մեզ յօգնականութիւն որպէս յուսացաք։ Լոյս աննման է լուսոյ արեգական. ժամս ոչ է արեւու. արեգակն է Քրիստոս յոյսն մեր որ երեւիս. արդարեւ ծագեաց արեգակն անմոռանելի և լոյսն անձառելի։

Երգ իբրեւ այսոքիկ հրաշալիսն փայլմամբ արտափայլեալ 36 լինէին 'ի սրբոցն, և գոհութիւն տային Քրիստոսի արթուն և զուարթուն խորհրդով։ Իսկ պահապանքն 'ի քուն կային անպատրաստք. քուն թանձրութեան և հակառակ փրկութեան իւրեանց նիրհեալք. վասն այնորիկ և անտես ոքանչելեացն լինէին, և խաւարեալք առ լոյսն։

Բայց մի ոմն որ արքունն կայր արժանանայր լսել զաղօթսն, և տեսանէր զնոսա ուրախ լեալ 'ի յերկնս Աստուծոյ։ Ի քնին 37 մտանէր, ըստ մտաւ ածէր զմահ անկեալոյն 'ի բաղանիսն և զարմանայր ընդ նոցա կեալն, յայսոսիկ և լուսոյն որ շուրջ զարքունիսն՝ տեսութեան արժանաւորիւր 'ի բացուստ։ Ուստի և պատկիս ինչեալս 'ի վերուստ երևուն և ինն զարմանագործ 38 տեսութեամբ 'ի միտ առնոյր զպակասեալն 'ի թուոյ չհամարեալն 'ի թիւ քառասնից, որով և պահն պակասեալ գտանէր։ Սիրտ նոր ստացեալ՝ արքոյն նախանձաւոր գտանէր. զոլս ընդ իւր էին զարթուցեալ զնոսա, մերկանայր զգեստն, ընկենոյր և զնին զմարդն, 'ի ներքս վազէր 'ի լեռն ինդալով 'ի դասս արքոյն։ Արքայն սիրով զանուն առնոյր, զքրիստոնեայ եմն ազաղակէր. տէր Աստուած, 'ի քեզ հաւատամ յոր ոգքայս հաւատան, ընկալ և զիս, համարեա 'ի թիւ արքոյս, զի և ես գտայց 'ի սոսա։ Մեծ խնդութիւն

է ինձ այսուհետեւ, զի թիւս խորհրդական լցաւ և սատանայ պարտեցաւ. այլ ոչ եւս կարծիս ունիմ պակաս գտանել առանց լիութեան, այլ լի և անթերի։ Արդ տացից և ես վայելչականս և գոհացայց ընդ արքոցն. Ով է Աստուած մեծ և հզօր իբրեւ զԱստուած մեր՝ որ առնէ սքանչելիս, և կամ ո՞վ է Աստուած բացց յԱստուծոյ մերմէ՝ որ արարս զայս ամենայն։ Բախացայց յոյժ ուրախութիւն մեծ, զի թիւ քաւանեկին լցեալ եղեւ և խնդութեամբ լցոյց զտրտմեալսն, զի այլ ոչ եւս ոք պատրի արտաքս ելեալ'ի բազմնիսն։ Ապա յետ այսպիսի պայծառութեան առաւօտ լինէր. և բանաւորքն անդր հաստանէին, ըստ քանդ.ապանն 39 ընդ նոսա տեսանէին և զարմանային. հարցանէին ապա և զայլսն՝ Գիտէք վասն որոյ պատճառի զայն արարս. և կամ զի՞նչ տեսեալ իշխեաց յայն մեծարանս։ Ասացին նոքա զատոյգն. Զարթոյց զմեզ, ասեն, 'ի քնոյ և տեսաք լոյս զնոքաքք շուրջ որպէս

Digitized by Google

զարեւ. զա յանկարծակի վազեաց
'ի ներքս աղաղակելով քրիստոնեայ
եմ։ Զայս լուեալ զայրանային, և
տուեալ հրաման քարշել 'ի լճեզն
և բրոջք ջարդել զբարձս նոցա մին-
չեւ իսպառ։ Ո՛վ անագորոն մտացն.
ոչ ուսեալք 'ի բարիս նախանձել,
այլ 'ի չարիս յորդանախանձք 40։
Խորտակեցան ամենեքեան և ան-
խորտակելի մնաց հաւատոյ նոցա
աներեւոյթ անձինք։

Սքանչելի է յայսմ վայրի ապատ-
մուելիւնս. մայր միոյ ուրուսն 'ի սրբ-
բոցն անմեկնելի առ նոսա մնայր,
քանզի մանկագոյն էր և գեռաբոզ-
բոջ հասակաւ որդի նորա։ Քթթել
ական իւր չտայր թոյլ, այլ ցանկ
առ նա պշուցեալ հայէր. և ձգեալ
առ նա զձեռն՝ ասէր խանգա-
կաթ 41 ձայնիւ և մայրապորով բա-
նիւք, Քաղցրիկ որդեակ ասելով,
և քաջալերս տալով. սակաւիկ մի
համբերեա, ասէ, զի կատարեալ
լիցիս. և մի երկնչիս, Քրիստոս
հաստատ է յոգնել։ Ո՛վ մայր քաջա-
հաւատ, ո՛վ զարմանք 'ի վերս քան

Digitized by Google

զքնութիւն կանացի տկարութեան, Դա եւս առաւել։ Այսպիսի վայել է անուանդ հաւատացեալոյ մեր, այսպիսի զարգացումն, սոյնպէս և հաւատք, այսպէս և յուսագրութիւն, ըստ այսմ և քաջալերութիւն առորդիս։ Նա զայսպիսիս ցուցեալ մայրութիւն որդւոյն իւրոյ և քաջալերութիւն. և ամենայն մարդ զնոյն ուսուցեալ հաւատարմութիւն 42, որով գովելի լինէր։ Թողից զսորա գովեստից քան, թէպէտ և բազումս իցէ արժանաւոր. Նա և քան զմեր խմացուածս գեր 'ի վերոյ գտանի, Թուի թէ և այլ եւս բազմաց ոչք նայիցին յայս։ Իսկ սուրբ վկայքն խորտակեալք ջալոտիւք՝ խնդութեամբ աւանդեցին զհոգիս իւրեանց 'ի ձեռս հրեշտակաց, ապրեալք յորոգայթէ որսակաց աղթիւք զամէնն առելով։ Որպէս լոյս լուսաւոր ամպոք յերկինս ամբարձեալք 'ի հոգիս արդարոց կատարելոց գրելոցն յերկինս. կամ 'ի ձեռս Աստուծոյ ըստ խմաստութեանն որ յառաքեան պատմի։ Սոյն-

պէս է իմանալ և այժմ. քանզի վայել է իսկ հաստատելն արդարոցն հոգւոց յայն յոր յուսացան մինչ 'ի միւսանգամ միաւորութիւն հոգւոց ընդ իւրաքանչիւր մարմնոց: Սայլս ապա հրամայեցաւ ածել և բառնալ զմարմինս նոցա և տանել 'ի տեղի այրման. զի զայս ուստոյց նոցա ստատանայ, կամելով անյայտ առնել զյիշատակս նոցա յերկրէ: Իսկ զպատանին Մեղիտոն թողին անդրէն՝ յուսալով զապրուստս նորա, զի դեռ եւս կենդանի էր: Այլ մայրն տեսեալ մնացեալ միայն և բարձանեալ յընկերակցացն, սիրտ առն ընկալեալ և զօրութիւն, զարկարութիւն մուսացեալ, 'ի յուս բարձեալ զմանուկն, խնդութեամբ ընթանայր. մայր մարտիրոսի ցանկայր լինել, և արդ հաստատէր խնդրոյն: Ի Ճանապարհին լուծանէր հոգին 'ի մարմնոյն և մտանէր առ Աստուած: Ապա մերն զսուրբ մարմինն տարեալ զկնի սայլին 'ի բանակն մաքուր ընկենոյր անյայտապէս փութով: Ներհեռայն 43 հուրն

Digitized by Google

բորբոքէր, մաքրմինք սրբոցն ողջակէզք կատարեալք 'ի հաճոյսն Աստուծոյ, ջրով և հրով մաքրագործեալք, և ամենայն փորձութեամբ փորձեալք, իբրեւ զարծաթ սրբեալք և զտեալ, եւթնապատիկ չարչարանօքն պարզեալ 'ի հոգոյ. որպէս 'ի դէպ նոցա եկեալ մարգարէին երդ, որ առ բազմապատիկ քննութիւնն ասէ, որգունակ զի ասցա է ասել. Փորձեցեր զմեզ, Աստուած և քննեցեր որպէս արծաթ զի քննի. և յաջորդօքն եւս պարծել. Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր. և դարձեալ ջուր՝ որպէս եղեւ իսկ և տեսաք։ Այսպիսեօք եւս քան զայս ընկալեալ հանդէս և վճիռ։

Սոցին այսոցիկ եղեւլոց ապա խորհուրդ առնէին եպիսկոպոսքն 44 այն ամենարշաւացն դասք և չարեացն խորհրդածողքն զանկորուստն գանձ պատուական ոսկերացն այրեւլոց կորուսանել ջրով ջանային, որ քան իբրեանցն կարողութիւն յոյժ խորհրդածեալ. զե-

Digitized by Google

ւորեալ 'ի գեան մեծ արկանէին ըզ-
բովանդակին , ոչ ինչ թողեալ արա-
տաքոյ ։ Խորհրդաբար ժողովեալ
զի մի մնասցէ մասն առ քրիստոս-
նեայսն՝ որովք առաքինասցին .
զայսոսիկ ունայնախորհուրդք 45 ։
Եւ այսպէս կամեցեալ ծածկել զա-
ղիական քաջ զօրականսն , ինքեանք
պատրաստեցեալ և յամօթ լեալ գոր-
ծակցաւն իւրեանց սատանայիւ՝ որ
զայսպիսիս մոլէր ընդդէմ արքացն ։
Իմ մեծ կարծելով զայս նոցա իւ-
րեանց անզգուշութեանն՝ յաղթու-
թիւն թագաւորական համարելով
զծածկել նշխարացն , 'ի Ջուրս գե-
տոյն արկանէին ։ Ոչք իբրեւ արկան
անդ՝ ժողովեցան 'ի միասին , բնաւ
ոչ կորուսեալ և ոչ մի , այլ 'ի միա-
սին գտեալք , Աստուծոյ զայս այս-
պէս հրաշագործեալ որպէս և կա-
ղող է . նա և լուսաւորագոյն քան
զփայլումն աստեղաց Ճառագայ-
թեալ 'ի Ջուրսն . և գաւառնութիւն
միութեանն նոցա անքաժանելի մնայր
և յետ մահուան ։

Տեսիլ երեւեցուցեալ եպիսկո-

պոսի քաղաքին յետ երկից աւուրց, և ցուցեալ յայտնագոյն նշանիւ զառեղին, յորում կային հաւատքեալ արքիեպիսկոպոսք ոսկերքն. 'ի գիշերի երկեալ հրամանն տային առնուլ յուղխից գետոյն՝ և տանել հանդուցանել 'ի հօրն գանձարան զանապական շնորհն զբժիշկին ախտաժեռաց։ Որոյ առեալ սրբազան տեսուչն Պետրոս զուխտ քահանայութեան վիճակի, երկեւոյթս բազմաւ 'ի տեղին հաստատէր հանդիպէր մեծի փափագմանն լուսոյ։ Սրբապէս ժողովեալ եղեալ 'ի միասին առանց պակասման գոտանէր 'ի ճաճանչ նշողից, իւրաքանչիւր տեսողացն ասատեղապէս երեւեալ լուսաւոր զջուրն առնէին. մի առ մի եղեալ անդրակոնելի սիրով, ամենն մի քառասունք անուանիեալ, տարեալ խնդութեամբ յօթեվանս արքայարոց 'ի տունս աղօթից 'ի տաճար տէրունի հանդուցեալ։ Երգ օրհնութեան և ոտն խնդութեան կատարեալ խնկաւէտ սաղմոսիւք և հոգեշնորհ օրինաք, աւետեաց յի-

շատակ և եկեղեցւոյ փառաց լրումն։ Լուսափայլ շնորհօքն զնոյնն կարգեալ յաստուածային ազգաց, օրէն և ասն տարեկան հրամանաւորեալ զայրաբ աւուր հանդիսարհական խոսմքս։

Իսկ արդ և մեք վերջացեալք ժամանակաւ, որ արժանաւորեցաք առնախմբել և ուրախութեամբ հոգեւորականաւ զուարճանալ՝ ի յիշատակի սրբոց քառասնից, տեսաք ըզպատմութիւն սոցա հանգիսին որչափ բաւական եղեւ մեր տկարութիւնս, և կարճաւոտիւք ասացան՝ ի ձեր լսելիս ոչքան և պատմեցաւ. ոչ ըստ նոցունց արժանաւորութեան, և ոչ ըստ ձերում փափագման և խնդրոյ, այլ ըստ իմ մտացս տակաւաստեսութեանս և փոքրանձնութեան յիմաստս։ Սիրելիք, արդ տեսցուք և զանուանց նոցա թիւքսառասուն են թուով, ոչ պակաս և ոչ յաւելեալ, զի թէպէտ և պակասեցաւ, դարձեալ Աստուծոյ տեսչութեամբն լցաւ։ Սոյն այր քառասուն թիւս բազում խորհուրդս ցուցանէ մեզ յինքն բարդեալ։ Նախ

Digitized by Google

քառասնեակ աւուրքք թուով կեն-
դանանալ յորովայնի իմանալն է
զմարդն և հոգեւորիլ։ Եւ զայս
է ուսանել 'ի սուրբ հարցն աւան-
դութենէ. որ և սոքա մեզ կեն-
դանացուցիչք գտան 'ի ձեռն իւ-
րեանց լուսաւորութեան և բա-
րեխնամութեան։ Վերացուք ապա
և յայլ խորհուրդ քառասնեակ
թուոյ. քառասուն պտուղքք ջրհե-
ղեղ ապականեալ զանօրինեալսն
առ Նոյիւ գտանեցեալ ջրով զհեղեղ
մեղաց։ Իսկ սոքա մեզ ջուր փրկու-
թեան և ջուր ուրախութեան ծա-
րաւելեաց 'ի սան տեառն, զի ին-
քեանք ջրով տանջեալք վասն Քրիս-
տոսի 'ի ջուրսն հեղձուցին զանմարդ-
մինն Փարաւոն։ Բախանան 46 և
արդարոց անձինք այսու քառաս-
նեակ թուոյ աւուրքք՝ պահօք ա-
ռաքինացեալք, հոգւով զօրացեալ
և զմարմինն նուաճեալ. որպէս
գլխովին է իմանալ. 'ի Սինէական
լերինն Մովսէս երկիցս անգամ.
ուր և աստուածատեսութեանն արդ-
ժանաւորիւր և զպատգամս պա-

տուխրանի և աւետեաց երկրին՝ ժողովրդեանն Իսրայելի առեալ բերեր յԱստուծոյ։ Այսպէս և ոչ քան արքայազանքս իւրեանց բարեփառ ունուանցն Թուոյ մեզ նոր Իսրայելի աստուածատես ժողովրդեանն եկեղեցւոյ զպարդեւս աստուածատուրս և զաւետիս 'ի յերկինս։ Ընդրոգելով Ճանապարհ հաշտարար իւրեանց 47 շարչարանօքն, և մեզ հրաւիրակք ոչ յերկիր աւետեաց, այլ 'ի վերնաքաղաքն Սիոնի մայրն արքոց։ Ոչ մոռանամ և զմեծն Եղիա 'ի մարգարէս զկուսաւթեամբն հաճոյացեալ Աստուծոյ. որ և զնախանձն Աստուծոյ աստուկապէս խնդրեր և պատուհասեր զԻսրայէլ անողորմաբար խրատով։ Սովով և երաշտով և գարձեալ հրկէզ 48 ոգաստարագօքն զմարգարէսն Բահաղու խապտ կոտորեր, և յանգիմանէր զԱքայաբ միւսանգամ անձրեւաձին ամպովքն։ Փախուցեալ լինէր յաստուածատեացն Եզաբելայ ըզքառասուն տիւ, և 'ի լեառն Աստուծոյ այսքան ոգեհաք արքամատոյց

Digitized by Google

լեալ ճշմարտութեամբ մարմնոյ. հոգւով ընդ Աստուծոյ խօսէր դէմ յանդիմանեն և մաշկեկաւն ծածկէր զերեսս զարհուրեալ յերեւմանն Աստուծոյ զինքն լեալ։ Իսկ զի այս է թիւ արբեցելոցս այսոցիկ, որոց անուանակիր է և արբոցս և պահոցս համարիք։

Արդ այսպիսեաք և սոցա առաքինութիւնս պահօք, ջրով և հրով, և թիւն քաջայարմար քառասուն. և սոքօք մեզ աստուածատեսութիւն յորինի 'ի սոյն տեսակ։ Լինի այսքիւք թուովք ընծայումն անգրանկացն Իսրայելի Տովսեսի օրինագրութեամբն, քառասնօրեայ յանգիման առնել տեսան 'ի խորանն արքութեան պատարագօք։ Որ և սոքօք ոչ միայն անդրանիկք գամրաց, այլ ամենայն անձն և ամենայն ազգ ընծայի Աստուծոյ, և յանգիման կան արքեալք և ազատեալք 'ի մեղաց սոցա բարեխօսութեամբ։ Քանզի իւրեանց օրինագրութեամբ և նահատակութեամբ և ջերմեռանդն սիրով զամենեցուն փրկութիւն հայցեն յԱստուծոյ. և սոցին թուովք

Digitized by Google

պահօք և մեք մեղքերակալք ընցուք։
Տէրն մեր և Աստուած Յիսուս
Քրիստոս ինքեան մարմնովն ծնանի-
գեամբն պատուեաց և զայս թիւ՝
քառասնօրեայ 'ի տաճարն բերմամբ
ծնողացն և ընծայեալ 'ի ձեռն ին-
քեան զարարածս Աստուծոյ և հօր
'ի բարձունս։ Ի սոյնչափ աւուրս
և յետ մկրտութեան պահեաց կե-
նարարն մեր Քրիստոս, և զամենայն
փորձութիւնս սատանայի յետ պա-
հոցն կատարման մարդկութեամբն
աստուածապէս յաղթահարեաց։
Մինչ կատարեաց զամենայն կիրս
անօրէնութեան մարմնովն իւրով
վասն մեր և զչարչարանսն խաչին և
զթաղումն և յարեաւ 'ի մեռելոց և
հաւատարիմ եղեւ աշխարհի, որ-
պէս ուսաք յաստուածային գրոց։
Յաւուրս քառասունս երեւեալ ա-
շակերտացն, և ուսուցեալ նոցա
զարժանն քարոզութիւն 49 վերա-
ցաւ յերկինս մարմնով, և գալոց է
միւսանգամ նովին մարմնով։ Նոյն
ինքն երիս քառասնեակս պատուե-
լով, ընծայելովն 'ի տաճարին 'ի

Digitized by Google

գիրկան Սիմէոնիի, յետ մկրտու-
թեանն պատհաւք և յետ յարութեանն
համբարձմանմէն յերկինս։ Արդ այս-
պէս խորհրդածեալ քառասնեակս
թիւ. ութ հնգեակս և հինգ ու-
թեակս, և չորք տասնեակս և մի քա-
ռասնեակ յինքն ժողովեալ և կա-
տարեալ այսպէս թիւս։ Ընդ է տե-
սութիւն նոցա, բայց մեք ասաց-
ցուք զոր ինչ իմանամք 'ի սատիւ
քառասնից սրբոց։ Ութ հնգեակն
ասացեալ՝ եւթն հնգեակն աշխարհ-
հիս այսմիկ եւթն հազար դարուցս
կենցաղավարութեան կարգս։ Գե-
ղեցկապէս բերէ զնմանութիւն, և
հինգ հինգ զթիւ նոցա վասն հինգ
զգայութեան մարդկան, որով գոր-
ծի բարի և չար, և աշխարհակիր
կեանս նոքօք յօրինի։ Իսկ յետ
եւթն հնգեկացս ութերորդ հրն-
գեակն զութերորդ դարուն՝ որ է
առաջին և սկիզբն անկէտ յաւիտե-
նին քրիստոսամուտ գալստեան ըստ
գրոց և դարուց։ Արդ հինգ հինգ
ասա մի մի դար խորհրդածեցուս քա-
ռասնեակս թիւ. զի հնգիւք զգայ-

